

ԳԼՈՒԽ III

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ (XIX - XX ԴԴ.) ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԵԱԸ ԵՎ ԱԳՈ ԵՐԳԵՐԻ ԴԵՐԸ ՆՐԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ

Մահացողները իրենց հետ տանում են ապրողների հոգուց մի ռաժին, ներաշխարհից մի մաս: Հեռանում են իրենց ետևում թողնելով տարակուսանք ու վիշտ, առեղծվածներ ու հանելուկային անորոշություններ. «Էն կինքեմէն օջով խարար չէ բերի»¹:

Մահը կյանքի կեսն է, միշտ ներկա ու աներևոյթ՝ ինչպես բոլոր ընկալալիցների կողքին խաղաղ ու խորախորհուրդ տարածվում են գերեզմանները:

Ջրաղվելով հայ ժողովուրդի կենցաղի ու սովորությունների ուսումնասիրությամբ, գրեթե ոչ մի ազգագրագետ, ռանահավաք ու պատմարան անուշադրության չի մատնել մեր ժողովուրդական ծեսերից ամենապարտադիրն ու ամենակայունը՝ հուղարկավորության ծեսը: Մեզ են հասել գրավոր ու ռանավոր ուշագրավ տեղեկություններ հայկական շատ ընկալալիցների՝ Գեղարքունիքի ու Ջանգեզուրի, Շիրակի ու Արցախի, Ջավախքի ու Վայոց Ձորի, Բարձր Հայքի ու Հայոց Ձորի, Վասպուրականի ու Ակնի, Մուշի և Տարոնի, Սասունի և Դերսիմի, Ալաշկերտի ու Բորջալուի, Բուլանջիսի ու Արճակի, Ջելթունի ու Գանձակի, Համշենի ու Ներքին Բասենի, Գողթնի և Իրանի Չհարմհալ գավառի, Հայեպի ու Կոստանդնուպոլսի, Դգլսրի ու Նոր Նախիջևանի հայ ընկալիչների հուղարկավորության սովորությունների մասին, որոնք վերաբերում են հիմնականում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարին:

Թաղման ծեսը պայմանականորեն ռաժանել ենք հինգ վուլի. ա) հոգեվարքում գտնվող հիվանդի ետ վարվելու ձևերի ամրոջություն, բ)

հանգուցյալի մարմնի նախապատրաստում, նախնական լաց ու սուգ, գ) մեռելատանը կատարվող գործողություններ, քանի դեռ հանգուցյալը տանն է, դ) դիակի տեղավորումը գերեզմանատուն, թաղում, ե) հոգեհաց, հանգուցյալի հիշատակին կատարվող արարողություններ:

Հիվանդը գտնվում է ոչ միայն ընտանիքի անդամների, այլև բոլոր հարազատների, մտերիների և ազգականների ուշադրության կենտրոնում: Անընդմեջ այցելությունները, գրույցները, հուսադրումները փորձում են շեղել նրա ուշադրությունը հիվանդությունից և թեթևացնել տևողապանքն ու ցավը: Յուրաքանչյուր այցելու անպայման որևէ ընտիր ճաշակելիք է բերում («տղապետ», «կամակ»):

Դիժար հիւանդուկ իմ ես,

Առ կամակ եկու զիս իտես:

Կամակտ ի գլխուս վերեւ,

*Ձեռքտ տար, սրտիս խոցը տես*²:

Այս սովորությունն է ակնարկում սգո երգը: Ձգտում են իրականացնել ծանր հիվանդի բոլոր ցանկությունները, ռավարարություն տալ նրա պահանջներին («սրտուզիլիքը կատարել»): Հավատում են, որ մարդու մահվան օրը ճակատագրով կանխորոշված է և ոչնչով հնարավոր չէ դրա դեմն առնել: Այն պայամանավորված է երկնքում գտնվող աստղի անկումով կամ քրով, թեվով լի կճուճի պարպումով: Մարդկանց մեջ «ժընաժենքին», «սըրրլըսին» և «հավախոսին» (այսինքն օրվա այն ժամերին, երբ լույսն ու խավարը գոտեմարտում են տիրելու համար և խառնաշփոթության մեջ ռացվում է չարերի

¹ *Ղանալանյան Ա.*, Առաժանի, Երևան, 1960:

² *Ճանիկեան Յ.*, նշվ. աշխ., երգ 25:

գործունեության ասպարեզը) շրջում են գրողները և ճիպտորով կամ միգակով խփում նրանց, ում օրհասը եկել է.

Գրող, և անօրեն գրող.

Ի՞նչ կուզէքու մարտի մենե,

Աշուն ու գարուն չըսեր,

Մեր կայեն ծանր կու բերէ³:

Այդ նշանների եետքերով էլ հոգեառ երեշտակները գալիս, առնում են հոգիները: Բարի մարդուն այցելում է ընդհանուր կամ Գարրիել հրեշտակապետը և վարդ կամ խնձոր պարզելով հիվանդին խաղաղ համաձայնությամբ անջատում նրա հոգին մարմնից (այս հավատալիքով են ընդհատում երեխաների ձեռքերը շարժելը մեռնելիս): Եթե մեռնողը չար է ու մեղավոր, չար հրեշտակը նրան տանջելով պոկում է հոգին, ինչպես փոքր երդիկից դուրս կքաշեն խոշոր ծառը:

Աշխատում են հանգիստ, անաղմուկ մթնոլորտ տեսնելու հոգեվարքը դուրսացնելու և բարություններ չառաջացնելու համար. եանում են ընդհանուր գլխատակից, աջ ձեռքը դնում վերմակի վրա, դադարեցնում խոսակցությունն ու լացը, ընդհանուր դմբերն ու պատուհանները՝ ապահովելով հոգեառի ազատ ելումուտը, երեխաներին հեռացնում սենյակից, որպեսզի եանկարծ վերջինս չտանի նրանց իր հետ:

Եթե եոգեվարքը («տուրք ու տապը») ձգձգվում է, դեռևս կենդանի մայրը կուրծքը քսում է մեռնողի շուրթերին՝ ազատելով նրան որդիական երախտի ծանրությունից, ներկայանում է գծոված ընկերը կամ ընկերակցը, մոտեցնում են հեռավոր հարազատի շրթերը, իրերը կամ նանակը, պատճառարանելով կարոտալի սպասումը («աշկը հղեց ա»), եաց են թխում և եկեղեցու դռանը ընկնում ընդհանուր պատահողներին:

Որոշ նախապաշարված մահացողներ անընդհատ պահանջում են փոխել իրենց տեղը՝ հուսալով, որ հոգեառը չի գտնի իրենց: Մեռնելու պահին երբեմն պայծառանում է մարդու միտքը, նա իր վերջին պատվիրաններն է տա-

լիս մերձավորներին: Նրա վերջին խոսքը, կամքը սրբազան օրենք է ապրողների համար:

Մեռալ և օսիյաթ արալ.

Իս ծամբուն վրայ թաղեցէք:

Քարս նշանով դրէք,

Անունս վրա գրեցէք:

Որդիկս ուր թագուոր անէք,

Ես աչօք անիմ, նայեցէք⁴:

Հրավիրված քահանան հաղորդություն է տալիս, աղոթքով քավում մեղքերը և նրան ներշնչում անմեղի ինքնավստահություն: Երբ կյանքը լքում է ուշադրության կենտրոնում գտնվող անձնավորությանը, մի շարք եղանակներով համոզվելով, որ նա դադարել է ապրել*, դեմքով շրջում են դեպի արևելք, փակում աչքերը, կապում ծնուտը, ձեռքերը խաչաձև ծալում կրծքին, ոտքի ընդհանուր կապում իրար**, մի շորով ծածկում (դիագարդ) և մի հաց դնում կրծքին: Անմիջապես վրա են թափվում հարազատները, գրկելով, համրուրելով դիակը, ընդհանուր ողորում ու ճչում, հավաքվում են հարևաններն ու ընդհանուրները:

ր) Երիտասարդ տղամարդու մահվան դեպքում, եթե առաջ եղերամայր դառնում էր կինը, ապա այժմ նախաձեռնությունը վերցնում է մայրը՝ որպես վշտերից գերագույնի կրող: Նրա պարտականությունն է՝ մանրամասն ժողովրդին ներկայացնել մահվան պատճառները, նկարագրությունը, մեռնողի ընդհանուր ու դրական գործերը:

Հիշենք, որ Փառանձեմը մայր ողորոց դարձավ այն ժամանակ, երբ արդեն հայտնի էր դարձել սպանության պատճառը: Բուզանդը մեջբերում է նրա ուղղակի խոսքը.

Լուարուք ամենեքեան,

գի մահն առն իմոյ

վլասն իմ եղեւ,

⁴ *Ճանիկեան Յ.*, նշվ. աշխ., երգ 54:

* *Սաուզում են գարկերակը, հայելի պահում ռունգերի դիմաց, կամ սեղմում եղունգները - Ե. 7.:*

** *Աչքերը փակում են, որ աշխարհից կարոտով չհեռանա, բերանը փակում են, որ համկարծ չար ոգին ներս չմտնի ու գրավի բերանով հեռացած հոգու տեղը, բթամատերը կապում են, որ նա չկարողանա վեր կենալ և գոռնադար դառնալ - Ե. 7.:*

³ Նույն տեղում, երգ 73:

զի որ ինձ ակն եր,

վասն իմ:

զայրն իմ ետ սպանանեմ⁵:

Նույնաման տեսարան ունի Անանուն պատմիչի ըբրած սգո ծեսը: Սոֆի տիկինը նախ չի ուզում հավատալ գույժին:

Ձի դուք, ո՛վ մարդիկք,

եւ ընդէ՞ր գործել զայդ յանդգնիք:

չիք ուրեք թշնամիք:

Ոչ ուստեք սլատեալ պատերազմ:

Ո՛վ ոք զայդ գործել համարձակեցաւ,

Ո՛վ ոք զոսկեփետուր խոյանայարձակ

Քաջագզի վարուժանն իմ հաւահար առնել

կամ ի ծուղակ ըմբռնել կարողանայր,

և ոչ ինքն օժտեալ ի նմանէն մեռաներ:

Ով ոք զբարձրաթիո արծիւն

քաջահնչօղ և ահարկու ծայնիւ

ի խոնարհ սուգել լինէր ծեռնհաս:

*Ո՛վ ոք զանյաղթ վիշապն սանձել մերծե-
նայր,*

եւ ապրեալ լինէր ինքն⁶:

Այժմ էլ, գրեթե միշտ մահվան լուրի կամ իրողության առաջին արձագանքը՝ չհավատալու, այդ լուրը ժխտելու, իյարված լինելու, դժբախտությունը իրենից վանելու հարագատի թուռն տենչն է:

Իմ որդեկս չէ մեռեր,

Սուրբ Յակոբ ուխտ է զնացեր,

Ինչ վարդ կայ՝ զլխուն դրեր,

Մանուշիկն հոտուն քնացեր⁷:

Առանձնապես մեծ է լինում չհավատալու հոգեբանական հավանականությունը, երբ մեռնողը, առավել հաճախ սպանվողը քաջ ու անվեհեր տղամարդ է կամ դեռարույս պատանի: «Դորա յանթիվ ճակատ մտեալ էր, եւ վեր երրէք չէր առեալ, ոչ նետ մի դիպեցեալ, երրէք, եւ ոչ այլոց գինու խոցեալ է գղա»⁸, - ասում էին ընտանիքի անդամները Մուշեղ Մամիկոնյանի մահն իմանալով: Որոշ ողբասացներ մինչև թաղման

հանդեսի ավարտն էլ առաջ էին տանում այս մոտիվը, փորձում համոզել, որ հարագատը չի մահացիլ ու կվերադառնա, սակայն մեծ մասամբ այսպիսի նախերգանքին հետևում է բուն ողորդ: Փառանձեմը սկսեց ծայնարկությունների օգնությամբ ստեղծել Գնելի մահվան ողբերգության վրպական հյուսվածքը, ապա գովասանական տարրերն ու ավաղ-ափսոսանքները: Սովի տիկինը «յառաջ կոչեալ զդատերս՝ սգոյ ողորոց յօրինէ կարգս, կարգեալ կացուցանէ դասս պարաւորս երրայեցիս եւ զթագավորացն Իսրայէլի նուագել տայ զողոս»⁹: Նույնն է մնացել սգերգելու կարգը՝ ռացաոելով ցուցադրականությունը: Կազմակերպչական մասը տեղափոխվել է մարդկային ներաշխարհի ու մտածողության փակ ոլորտներ:

Մահվան պահից քիչ անց հոգ են տանում դիակի մասին: Ընդհանուր, մինչև վերջերս ընդունված սովորություն էր այն լողացնելը: Այս տխուր պարտականությունը կատարում էին մեռելի սեռի մարդիկ՝ կամնի, տախտակի (որ հատուկ պահվում էր եկեղեցում) կամ տաշտակի վրա, քահանայի օրհնած սառը կամ գուլ ջրով: Հանգուցյալին երախտապարտ անծինք մի-մի թաս ջուր էին լցնում դիակի վրա, որ նա իր «ամազը (երախտիքը) իընեց հալալ անի»: Լողացնողները երբեմն թարեմադթանքի հմալական խոսքեր են շնջում:

Քարդ քաղած ընի,

Հողդ մաղած ընի,

Դատաստանդ քաղցր ընի,

Գնալ ճանապարհդ բարի ընի,

Աղոթքդ տանդ վրա ընի,

Սնացածներդ բարի ընի,

Դու էլ բարի մեռել ընիս,

Հմոռանան քե՛¹⁰:

Լողացրած տեղում յոթ օր մոմ էին վառում, օգտագործած փոքր ամանները ջարդում, իսկ մեծը՝ շրջում հետո պատանքում էին դիակը*:

⁵ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 191:

⁶ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն նրբունյաց տան, Երևան, 1985, էջ 414:

⁷ Ճանիկեան Յ., նշվ. աշխ., երգ 83:

⁸ Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., էջ 363:

⁹ Թովմա Արծրունի և Անանուն, նշվ. աշխ., էջ 414:

¹⁰ Լալայան Ե., Գանձակի գավառ, Երկեր, հ. II, Երևան, 1988, էջ 408:

* Պատանքի սպիտակ, անվա կտորը երեք անգամ իրար էին ձգում դիակի վրայից, ապա կարելով պատանքը, դեմքի մասը թողնում էին բաց ասեղը կտորի մեջ, որպեսզի

Հանգուցյալի ռունգերում և ականջներում խունկ էին դնում: Սենյակում խունկ էին ծխում: Խունկը Հայաստանում, Հունաստանում և Արևելքում ընդհանրապես չար ոգիներին վանող և բարի ոգիներին առինքնող միջոց էր համարվում:

Կին հանգուցյալին կապում էին պատանքի կտորից գոտի, ուսկապ և քիթկապ: Վերջինս կապված է հանգուցյալի դեմքը դիմակով ծածկելու վաղնջական ծիսական սովորության հետ**:

Պատանքը ոչ միայն պետք է բացառեր դիակի շարժվելը և գոոնադաբ լինելը, այլև ընկերքի նմանողությամբ խորհրդանշում էր մարդու երկրորդ ծնունդը այլ կյանքի համար: Սգո երգերում կան պատանքելու սովորության հիշատակություններ.

*Աս օր քեզ լռեցուցին, դրին պատնեցին,
Լալկան բերին, կանաչ արեւդ լացին:*

.....
*Գառնուկիս պատնեքը թելով կարեցեք,
Մօրկանը սրտիկը շիշով տաղեցեք*¹¹:

Պատանքված հանգուցյալը փաթաթվում էր կարպետի մեջ և դրվում նաշի վրա: Դիակի երկարությունը չափում էին թելով, որպեսզի պատանքը (հետագայում՝ դագաղը) նրա չափով լինի («րոյդ չափին»): Կենդանի մարդու հասակը երբեք թելով չէին չափում, բացառություն էին կազմում հիվանդները, որոնց բույսչափ թելերը դնում էին հանգուցյալի դագաղի մեջ, որպեսզի նա իր հետ տանի վերջիններիս ցավերը («ցավդ տանեմ»): Տեղին է հիշել, որ թելը ակնարկում է կյանքի տևողության չափը: Ուջանի

Եկեղեցական պատարագից հետո ծածկեն քահանայի տված «վարչամակով» (խաչածև կտրած, մոմած և տեղտեղ խունկ կպցրած կտոր): Դեմքի մասն էլ կարելուց հետո ասեղը կտրում էին: Պատանքի մնացորդը փաթաթում էին պանը շշնջալով: «Աստված օղորմի քեզ, քու մնացյալն ա» (Ե.Լալայան, վերը նշված տեղում): Այժմ դիակը մաքրելուց հետո նոր շորեր են հագցնում, առանց պատանքելու - Ե.Յ.:

** Հին դամբարանադաշտերի պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազում, քիթեղյա (երբեմն ոսկյա) ակնակալներ և շրթնակալներ: Այս իրողությունը վկայում է, որ հանգուցյալի աչքերն ու թերանը կապելու սովորությունը դարերի պատմություն ունի (տես՝ Ժ. Խաչատրյան, Անտիկ դամբարանադաշտեր, Երևան, 1981, էջ 40 և նույն հեղինակի «Ուշ հելլենիստական շրջանի եզակի դամբարան», «Լրաբեր», 1977, № 1, էջ 55) - Ե.Յ.:

¹¹ Մատենադարան ժողովրդեան, հ.30, Կ.Պոլիս, էջ 24:

դամբարանի պեղումների ժամանակ հայտնաբերվել են դամբարանախցում տեղադրված իլիկներ¹²: Հայ ժողովրդական հեքիաթներում իլիկներ են գլորվում գետնանցքի մեջ և հերոսներին տանում անդրաշխարհ, հաճախ ցույց տալիս նրանց բախտի ճանապարհը: Ստորերկրյա աստվածուհիների իլիկները կամ կծիկները խորհրդանշում էին կյանքի տևողություն: Վերջապես, «կյանքի թել» բառակապակցությունը շատ ընդունված, գործածական արտահայտություն է նաև այսօր:

Գ) Հանգուցյալի սենյակի հայելիները ծածկում են սպիտակ շորերով*, տանը ոչ մի լույս չեն հանգցնում, դիակի մոտ մոմեր են վառում: Եթե հանգուցյալը երիտասարդ է կամ օրիորդ, սգվորները դագաղի վրա դնում էին առաջ՝ սպիտակ դրամներ խրած կարմիր խնձոր, այժմ՝ սև քողով պատած նշանի մատանին և լայով պատվերներ տալիս սիրածին: Եթե երեխա է, ձեռքերում երեք անգամ հանգցրած, կրկին վառած մոմեր են դնում, որովհետև նա «լույսի պես մաքուր է», լույսով պիտի գնա իր ճանապարհը և հետագայում էլ լույսով դիմավորի ծնողներին:

Հանգուցյալի հանդեպ եղած հարգանքն ու ակնածանքը, սիրելիից հավետ բաժանվելու զգացողությունը, հավաքվածների ողբալու տրամադրությունը դուրացնում է մահերգելու ունակությունների դրսևորումը: Ասացինք, որ ողորդ սկսվում է հարագատի մեռնելու պահից: Գյուղերում հենց սգվորների բարձրաձիչ աղաղակներն էլ հավաքում են մարդկանց: Երբ հանգուցյալը հուղարկավորվելու համար պատրաստ դրված է սենյակի մեջտեղում, սուգը դառնում է ավելի կանոնավոր ու անընդմեջ: «Ողբերգու-

¹² Թումանյան Ա., Ուջանի դամբարանաթումբը, «Պատմաբանասիրական եանդես» (այսուհետ՝ ՊԲԳ), 1993, № 1-2:

* Հայելիները առնչվում են անդրշիրմյան պատկերացումների հետ և հաճախ են հանդիպում. Հայաստանի անտիկ շրջանի դամբարաններում (տես՝ Խաչատրյան Ժ., Ուշ հելլենիստական շրջանի եզակի դամբարան, «Լրաբեր», 1977, № 1, էջ 55): Բացի այդ, հայելին արտաքինը շտկելու միջոց է, լավ տեսք ունենալու ցանկություն հուշող առարկա: Մի բան, որ պետք չէ սգվորներին, ընդհակառակը, նրանց հաճելի չէ տեսնել իրենց արտապաթոր դեմքն ու վշտոտ կեցվածքը - Ե.Յ.:

թյուններու կ'ըսեն «Գովք», որոնք խիստ տխուր, տաղտկալի եղանակ մը ունին: Գովքը հետևալ կերպով տեղի կունենա. կիները մեռյալի երկու կողմերը կը թափեն հավասարապես. մեկ կողմը գովքին I տողը կ'երգէ. միւս կողմը զայն կը կրկնէ նոյն շեշտերով, II տողը, որ վերջինն է, մեկ կողմը կ'երգէ, միւս կողմը զայն կը կրկնէ, այսպէս շարունակարար», - գրում է Թ. Գապասագալը Իգմիրում մեռելին ողբերգելու կարգի մասին¹³:

Գլխավոր դերը կատարում է մահացածի ամենամերձավոր կին հարազատը, որ նստում է հանգուցյալի սնարին, մյուսները թուրովում են դիակի շուրջ և մոլեգնում սուգը¹⁴:

*Սէվլի պոյիդ ըլլիմ դուրպան,
Որ թոռնեցաւ ծաղկի նըման.
Մօրրդ քընքուշ ծունկն ի՞նչ եղաւ,
Երր գլուխդ այդպես վըրէն ինկաւ.
Քեզի համար ի՞նչ կը սխալէր,
Որ թողուցիր պապուդ տըներ*¹⁵:

Ողբում է մայրը, որի ընթացքում պահպանվում է լռություն, միայն այս ու այն կողմից լսելի են լինում զսավսծ հեկեկոցներ: Մի պահ դադար է առնում եղբերգուն, կանայք կրկնելով նրա որոշ արտահայտություններ կամ պարզապես «վայ» ու «հեյ» կանչելով բարձրաձայն լալիս են: Ներս է մտնում նոր այցելու. ամեն նոր եկողի եետ հայտնվում են նոր ասելիքներ, խոսքը դառնում է նրա ու հանգուցյալի հարաբերություններին: Սգո երգի այս՝ անհատական ապրումներից բարձրանալու և իմրական վիշտ, ցավ, հոգսեր արտահայտելու ընդհանրական հատկանիշը պայմանավորված է ծեսի հանրային ընդունումով, որը ի սկզբանե յուրաքանչյուր ծեսի նախապայմաններից մեկն էր: Այդ մեծ վշտի պահին անգամ սգո երգի մեջ երախտա-

գիտության շեշտեր են հայտնվում ուղղված այցելուներին, որ այդ դժվար պահին մենակ չեն թողնում սգվորին.

*Տղաս, ելիր, տես ո՞վ եկաւ տեսութեան,
Երթանք, նըստինք ներսի սաղման՝ մեծ օտան.
Չայն ծուն չըկայ, կը քնանայ, չարթննար,
Չաւկիս գլխին ինչ ծիւն եկաւ, ինչ սև դար*¹⁶:

Դարձյալ բարձրաձայն լալուց շիկացնում է ողբի աղեկտուր ընթացքը: Շնչակտուր մորը շարունակում է մեկ ուրիշ սգվոր.

*Ի՞նչ ցավ էր ան անտանելի
Եկաւ փակաւ կըտրիծ, քըզի,
Վայ մօրդ ու հօրդ, խայիմներուդ,
Որ կորուսին քեզ այսպես շուտ.
Աղբօրդ հետ չուք մ'աղաւնի
Մէկը թըռաւ, մէկն՝ աշխըրհի,
Թող լաց ասէ խեղճուկ մարդդ,
Որ կորսընցուց կէճճ արեւըդ*¹⁷:

Եթե հանգուցյալը «թանկ մեռել» է (չափահաս երեխա, երիտասարդ, դեռատի կին, պատանեարի գոհ), կոծողները երբեմն հիշում են ինքնաձեռնարկի ավանդական ծեսերը՝ ծեծում են գլուխն ու ծնկները, ձգում մազերը, ճանկոտում երեսները: «Երր մեռեալն տակաւին երիտասարդ է կամ յոյժ սիրեցեալ, ոմանց մայրն, քույրն եւ ամուսինն գլխոյ մազերնին սակաւ մի կը փետրեն»¹⁸: «Երբեմն ննջեցյալի կինը, մայրը, քույրը կտրում են իրենց մազերը և ղնում ննջեցյալի սրտի վրա»¹⁹:

Երբեմն լացող կանայք փորձում են համոզել վշտագար մորը, որ որդին կենդանի է, օրինակ՝ այսպես.

*Չէ՛ մեռեր քո որդին, չէ՛ մեռեր,
Իջեր բախճան ի վար գնացեր.
Վարդ է քաղեր, դրեր գլխուն,
Քունն է տարեր անուշ հոտուն*²⁰:

Սակայն հուսահատության գագաթնակետին հասած մայրը ժխտում է նրանց.

Իս մի խաբէք, այսպէս երկայն քուն չըլլար,

¹³ *Քիւրակն*, № 34, Կ.Պոլիս, 1899, էջ 542:

* *Քանի որ ծեսի հետ ունեցած կապի ամսիցականությանը և ծեսի մեջ ունեցած դերի հստակությանը առավել սուքի են ընկնում. Կ.Տեր-Միսայանի գրառած երգերը, որոշել ենք սգո երգերի հերթագայությունը սյարգաբանել դրանց միջոցով, մանավանդ, որ 19-րդ դարի վերջին էական տարբերություններ չկային Հայաստանի արևմտյան և արևելային հատվածների բաղման սովորությունների միջև. - Ե. Գ.:*

¹⁵ *Տէր-Միսասեան Վ.*, նշվ. աշխ., էջ 55:

¹⁶ *Տէր-Միսասեան Վ.*, նշվ. աշխ., էջ 29:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ *Ճանիկեան Յ.*, նշվ. աշխ., էջ 130:

¹⁹ *Լալայան Ե.*, Մուշ-Տարոն, ԱՂ, գ. 26, էջ 187:

²⁰ *Տէր-Միսասեան Վ.*, նշվ. աշխ., էջ 29:

*Մեռաւ, եակրուս, տունս արեցաւ, ալ չըկայ ճար*²¹:

Այցելուները անմիջապէս միանում են մահերգությանը, առանձնապէս երբ նրանց մեջ էլ կա հարազատակորույս մեկը, վշտով թաղղատվում են եղբերամոր հետ: Այս համեմատությունից առավել ընդհանրական, լայն ու խոր թափ է ստանում ողբը, և ծնվում են այսպիսի գոհարներ.

*Կրակ ինկեր այգիներուն պարերը,
երթանք, ըսէք թող չի բերեն մարերը.
Որուն գառն է մեռեր, որուն ընկերը:
Եկու, գառնուկ, եկու, ո՞ր ես մնացեր.
Ել ի բարձր լեռը, դո՞ւքսն ես մնացեր,
Չի՞ կայ գալու ճանքայ, հո՞ր ես մնացեր*²²:

Ավելի մեծ վիշտ ունեցողին համեմատարար փոքր վշտատերը պատկառանքով է վերաբերվում և նրա մոտ ամաչելով է լաց լինում. «Ախ՛չի, Նաթո... եկալ ըս հանցու մեզ սուսավ անի՞ս...»²³: Երիտասարդ կնոջ համար անպարկեշտություն է համարվում ծնողների և տարիքով հարազատակորույսների ներկայությամբ ամուսնուն, անգամ սեփական փոքրիկին սգալը, այդ իրավունքը ձեռք է ընկնում հարսնության կուտակվող տարիների ընթացքում: «Պապա, խե՞ տուս չըս կյամ, մին թիքյա իմ խուխես յիրա լաց ընիմ»²⁴, - աղերսում է արցախցի դեռատի որդեկորույսը:

Օրեր տևող լաց ու կոծը ուժասպառ է անում սգվորներին. ձայները կտրվում են, ուժերը հատնում, շնչասպառվում, բայց հարկ է շարունակել, ոչ մի նորեկո այց չի կարելի անուշադրության մատնել, չի կարելի մեռելը առանց ողբի թողնել: Շրջապատողները մխիթարում են հանգուցյալի հարազատներին, հորդորում տղամարդ լինել, հոգածությամբ իրենք են շարունակում ողբը:

Մոլեգնում է վիշտը, երբ որևէ մեկը հանդես է գալիս հանգուցյալի անունից, ասում նրան հա-

տուկ, իրադրությանը համապատասխանող խոսքեր.

Գնա ու գնամ: կ'ըսես. ես կ'երթամ, բարով մնա կ'ըսես.

Ամենքդ հաւասար նստէք, իմ տեղս խոս պահեցէք:

*Ամենուդ խըմածն անուշ, իմինը իմ տեղս վաթեցէք*²⁵:

Սա ոչ միայն հիշողությունն է զգեստավորված ու դիմակավորված հանգուցյալի դերակատարի, այլև պահի հոգեբանական թելադրանքն է: Հանգուցյալի անունից հյուսված այս կարգի սգո երգերը արտահայտում են. 1) կյանքի իրապույրները առհավետ լքելու ավստսանք, իրաժեշտի խոսքեր, տարակուսանքներ սպասվող անհայտության մասին, 2) կյանքի ու մահվան շուրջ փիլիսոփայական խոհեր, 3) ցանկություններ ու պատվերաններ՝ ուղղված ապրողներին:

Մեկը խնդրում է հիշել իրեն, մյուսը հորդորում է առատ արցունք թափել, երրորդը կտակում է իրեն ճամփի կողքին թաղել, որ շփվի անցողիների հետ ու մեմակություն չզգա:

*Շարմաղ բերէք, վըրիս ֆեօղը մաղեցէք,
Տաշճին բերէք մեր մեր քարեր կըյեցէք,
«Մուրատուզ է ելեր» վրաս գրեցէք*²⁶:

Այս երգերը, որ ասվում են պահը ավելի հուզիչ դարձնելու նպատակով և ծնվում են հանգուցյալի՝ հարազատի ետև հաղորդակցվելու բուռն պահանջից, հաճախ ներկայացնում են մահվան պահի երևակայական ապրումների պատկերը:

Երբեմն անգամ սգերգ է հյուսվում նոր հանգուցյալին այն աշխարհում դիմավորող հին հանգուցյալի կողմից.

*Ես իմ եկեր, ես իմ փոշըմներ,
Դուն ալ ուր ես ու ելեր եկեր:
Օտա չունիմ, ուր օտաս տանիմ,
Անդնակ չունիմ, էռջիտ զարդարիմ*²⁷:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Անձնական գրառումներ, Արցախ, Շուշի, 1994, ապրիլ:

²⁴ Նույն տեղում:

²⁵ *Սրվանձտեանց Գ.*, Մաե-երգ, «Արեւելեան մամուլ», Զմիւռնիա, 1884, ԺԴ տարի, յունիս, էջ 301:

²⁶ *Վարդ Ս.*, Երգը իր հոգեկան պէտք, «Բիւրակն», Կ.Պոլիս, 1899, № 42, էջ 803:

²⁷ *Ճանկեան Զ.*, նշվ.աշխ., երգ 28:

Պատահում է, որ մահը վերագրվում է որևէ մերձավոր հանգուցյալի կամքի, որը կարող է առնելու համար իր մոտ է կանչում հարազատին: Նման դեպքում հանդիմանվում է նա. «Նամարդ ընիս, Գյուլնարա, բալի աշկո Սամվելին յիրա յա իլալ, բալի ասալ ըս՝ իոխաս ընդեղ անդար ընդերու ա, պիրիմ կոշտս...»²⁸: Իսկ երբեմն էլ, առանձնապես երբ որդին է մեռնողը, մայրը նրան համարում է գոհաբերություն՝ այս կամ այն վաղամեռիկ հարազատին: «...Ես միշտ ասալ ըմ, Ռուդիկը իմ պապու նման ա, էլ հիմչ ախճիգ ըմ, վեր իմ պապու փալ չըմ տլական: Ռուդիկը փայ ըմ տամ պապուն, պապան աշկը թուռներու յոան ա քյեցալ»²⁹: Այս տեսակ մտածողությունը արդյունք է այն հավատի հիշողության, ըստ որի մեռյալները ապրողներից մարդկային զոհեր են պահանջում:

Չայն ծայնի են տալիս վիշտ ունեցողները, բորբոքում միմյանց կսկիծներ.

Գիտես թը ուր իմ էկե,

Լալովի լացո իմ էկե.

Ընծի մեռեր սիրական էրիկ,

*Քեզ է մեռեր կանանչուկ սողջիկ*³⁰:

Սուգը դառնում է հուզիչ գրույց սզվորների ու հանգուցյալների միջև, արտահայտվում են բոլոր ցանկացողները, պատմում իրենց վշտերը, հիշում հին ու նոր ննջեցյալներին: Նոր մահացածի հետ հարաբերում են հենրի մահվան հանգամանքները, անավարտ իղծերը, անկատար գործերը, անտեր ու անհույս հարազատներին: Անդարդ ծերի մահվան դեպքում երանի են տալիս նրա ինչպե՞ս ճանապարհին: Թափում, դատարկում են սրտերը, լացելով հանգստանում, մխիթարվում մահվան ընդհանրությամբ և անդիմադրելիությամբ, ձեռք ընդունում հոգեկան հավասարակշռություն. «Մահը մերն է, մենք մահիմը», իմաստնանում կյանքի անցողիկության գիտակցմամբ ու շարունակում ասպ-

րել: Սա է սգալու մեծ դերն ու կենսական նշանակությունը:

Քանի դեռ հանգուցյալը տանն է, տանը ոչ մի զործ չի կատարվում, բացի հոգեհացի պատրաստությունից: Իրիկնամուտին ղաղարեցվում է լացը, ողջ գիշեր լույսերը վառ են մնում:

Վառիմ կրակ ու լամ կրակով,

Վառիմ ծրագ ու լամ ծրագով,

*Չըպա թը քու զեներտ իմանամ*³¹:

Սգո երգի պատահիկը վեայում է, որ երբեք ինավարում չեն ողբացել հանգուցյալին: Խավարը հազար ու մի գաղտնիք ու վտանգ ունի: Լույսը ցրում է չար ոգիներին, երկվությունն ու տազնապը, պարզորոշ ու հասկանալի դարձնում վիշտն անգամ:

Որոշ վայրերում գիշերը հանգուցյալին մեռնակ են թողնում իր պահապան հրեշտակների հետ (Երևան, Արճակ), իսկ այլ տեղերում (օրինակ, Արցախում)՝ մոտը անպայման մի տարեց հարազատ է նստում, որ նրան պահպանի չար ուժերից և միաժամանակ հսկի նրան: Կային հայկական բնակավայրեր, ուր թաղումը կատարվում էր շատ արագ: Օրինակ՝ Բազարգյուղում «հիվանդին մեռնելն ու ամեն տեսակ արարողությունները հազիվ մեկ ժամ կտեւեն. Կիրակոս կամ Թորոս եղբորը մեռնելն լուրը կառնվո, մեկ մ'ալ նայիս, որ ննջեցյալը թաղել կտանին»³²: Իսկ ընդհանրապես հանգուցյալին առաջ եկեղեցում, իսկ այժմ տանը պահում են մեկից երեք օր, որպեսզի ժամանակ շահեն հոգեհացի կարիքները հոգալու համար, և մեր ազգային յուրահատուկ ճակատագրով՝ հեռվում գտնվող հարազատները հասցնեն ներկայանալ թաղմանը: Կումայրիում զանազան պատրվակներով ձգձգում են թաղումը, դա համարելով սիրո ու հարգանքի նշան մեռած հարազատի հանդեպ:

«Մեռուկ կով կաթնով կեղնի», - հանգուցյալին շատ մեծ ուշադրությամբ են շրջապատում: Գյուղերում թաղմանը ներկայանում են անխտիր բոլոր ընտանիքներից. անկախ կեն-

²⁸ Անձնական գրառումներ, Արցախ, գ.Աշան, 1994, հունվար:

²⁹ *Հարությունյան Լ.*, Նշխարներ Արցախի ռանահյուսություն, Երևան, 1991, էջ 318:

³⁰ *Թումանյան Մ.*, Հայրենի երգ ու րան, Ե.3, Երևան, էջ 385:

³¹ *Ճանիկեան Յ.*, նշվ.աշխ., երգ 67:

³² Մատենադարան ժողովրդեան, նույն տեղում, էջ 21:

դանի ժամանակ տվյալ անձնավորության նկատմամբ ունեցած վերաբերմունքից:

դ) Լաց ու կոծը իբ գազաթնակեսսին է հասնում դազադը կամ նաշը տնից եանելիս: Չարազատները կառչում են դիակին, արգելում տանել:

*Քուրերն ալ փաթուած են, չեն թողուլ տանիլ.
Մօր ճիկարն է փաթուած՝ բոնած են տանին,
Աճապ ես խնտա՞մ, մի սիրուն սիրական*³³:

Նրանց մեղմ հորդորելով հեռացնում են և մի քանի տղամարդ (չորս կամ վեց) նաշը երեք անգամ դնել-վերցնելուց հետո ուսամբարծ կամ ձեռքերի վրա մոտեցնում են դրանը, դուռը բացում-փակում, նաշով իսփում շենքին և դեմքով դեպի դուրս հանում բակ: Դիակից առաջ ոչ մեկը տնից դուրս չի գալիս: Բակում նորից հանգուցյալը տեղադրվում է կարպետի կամ գորգի վրա, դեմքով դեպի արևելք՝ ո՛չ դեպի տուն: Վերստին շրջապատում ու ողբում են հալազատները, ապա նաշը (դազադը) վերցնելով երեք անգամ պտտեցնում են, որպեսզի, ինչպես շենքից հանելիս, շեղվի ննջեցյալի ուշադրությունը և նա կորցնի տան ճանապարհի կողմնորոշումը³⁴: Դազադի ետևից հող կամ ջուր են շարտում կամ էլ կավե պուլիկ ջարդում, որ գնալիք ճանապարհը բարի լինի, և նա չզգա նախկին կյանքի ու միջավայրի կառուցումը: Դազադի տեղը քար դնելը կամ գարի շաղ տալը բացատրվում է անդարծ հեռացածի հիշատակի հաստատումն ու երկարատև լինելու ցանկությանը, ինչպես նաև այն նկատառումներով, որ քարը իր ժանրության տակ արգելում է մահը, իսկ հատիկը խորհրդանշում է կյանքի եարատևություն: Թաղման թափորին առաջնորդում է քահանան տիրացուի, իսկ ու իսաչվառի ուղեկցությանը՝ գզուշանալով ետ նայելուց: Եթե քահանան ետ նայի, դրանով արտահայտած կլինի ննջեցյալի կարոտը, և նորից մահ կպատահի:

³³ Գուստոացի, Երզնր, առակներ, հանելուկներ, սնահավատություններ խոտորջրոյ, Տվիխիս, 1903, էջ 30:

³⁴ Այս տվորությունը ունեն նաև սլավոնական ժողովուրդները, տես՝ *Свейникова Т.*, Волк в конетксте румынского погребального обряда, Исследования в области балто-славянской духовной культуры, Погребальный обряд, Москва, 1990, с.133.

«Չուդարկավորութեան թափորի ատեն կը վարծվեր ողբասաց լալկաններու մեծ բազմութիւն մը: Դազադի առջեւէն կը քալեին մեռնողին գերիները, քուրջեր հագած, եւ հանգուցեալի ձիերն ալ, ծիապաններէ առաջնորդված մեռելական թափորին մաս մը կազմեին»³⁵:

Վարծու լալկաններին ավելի ուշ սկսեցին փոխարինել քաղաքում փողային նվագախումբը, իսկ գյուղերում՝ ժողովրդական «սազանդարները», որոնց արմատները կային պատմության խորքերում՝ փող, փանդիո ու վոն նվագողների տեսքով:

Չանգուցյալի ձին՝ թարս թամբած մինչև վերջերս տանում էին գերեզմանոց³⁶: Ձին ընդհանրապես, եզան, իռայի ու շան հետ որոշակի դեր ուներ թաղման ծեսի մեջ: Վերջիններս հանդիսանում էին զոհարելության կենդանիներ, դրանց կերպարանքով գերեզմանաքարեր էին կանգնեցվում, դրանց հետ կապում էին մահվանն ու հանդերձյալ կյանքին վերաբերող շատ հավատալիքներ:

Գերեզմանատան ճանապարհին, որևէ պատեհ վայրում թափորը հանգիստ է առնում: Դիակիրները ստեպ-ստեպ հերթափոխում են իրար, որ և՛ չհոգնեն, և՛ միաժամանակ շատերը կարողանան իրենց երախտաիքի տուրքը մատուցել հանգուցյալին: Որ տան մոտով անցնում է թափորը, բնակիչները դուրս են գալիս կամ մոտենում պատուհանին, նստածները կանգնում են, քնածներին արթնացնում են, երեխաներին գրկում, անգամ օբորոցները բարձր տեղ դնում, որ դազադի շուրջը սավառնող հրեշտակը չզայրանա անուշադրությունից ու «չխփի» նրանց: Պատահող անցորդները հարգանքով հանում են գլխարկները, «Աստված օդորմի» մաղթում և կանգնում մինչև թափորը անցնի: Գերեզմանոցում դիակը դրվում է գերեզմանափոսի աջ կողքին, որը փորված է լինում մույն օրը՝ քաղաքում վարծու մարդկանց, իսկ գյուղերում այդ գործը սովորաբար անող-

³⁵ *Թոսան Զ.*, Պատմութիւն Չալեպի հայոց, հ.Ա, Պեյրուք, 1946, էջ 716:

³⁶ *Լալայան Ե.*, Ծիսական կարգերը հայոց մեջ, պր.Ա, Թիֆլիս, 1913, էջ 25:

ների կամ բարեկամների կողմից: Գերեզման փորողներին այցելողն ասում է. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Փորողը պատասխանում է. «Օրհնյալ է հարություն Քրիստոսի», կամ՝ «Աստված օղորմի», «Օղորմի բարի ծնողացո՛ հոգուն»: Այս փորողը թին կամ բահր թողնելով փոսի մեջ, դուրս է գալիս, մյուսը փոխարինում է նրան: Երբեք բահր ձեռքից ձեռք չեն փոխանցում. հանգուցյալին մատուցվող ամեն ծառայություն պետք է լինի ինքնաբուխ, ոչինչ չի պարտադրվում, դա կամավոր տուրք է:

Եբբ վերջացնում են փորելը մեկ մետր լայնությամբ և մեկուկեսից երկու մետր խորությամբ (սովորաբար կնոջ գերեզմանափոսը ավելի խոր են փորում³⁶), գործիքները խաչաձև դնում են գերեզմանափոսի վրա, որպեսզի այնտեղ մուտք չգործի չարը: Առաջ գերեզմանափոսի մեջ դրան էին նետում, որպես հանգուցյալի «նոք տան» արժեք: Այժմ, քանի որ կանայք այցելում են գերեզմանոց, ողբը շարունակվում է նաև այնտեղ: Մի վերջին անգամ հաբազատները շրջապատում են հանգուցյալին, համբուրում, ողբում, հրաժեշտի խոսքեր ասում, բարևներ ուղարկում բոլոր նրանց, ովքեր դիմավորելու են նոք հանգուցյալին. «Առաջրդ եկողներեն մատաղ. էն ըն իննական հերթավ վեները քեզ սպրսեխս»³⁷: Պատանքված դիակը կամ դագաղը զգուշությամբ իջեցնում են գերեզմանափոսի մեջ: Դամբարանը դառնում է այս ու այն կյանքերի միջնորդ օղակը:

Նախ քահանան առաջին բուռ հողը օրհնում է մոտ հարազատի ձեռքում, ապա ինքն է երեք բուռ հող լցնում՝ ասելով. «Հող ես, հող դառնաս, եողը՝ հողին, հոգին՝ Աստուծոն, օղորմի քո հոգուն»³⁸: Այս երեքական բուռ հող են լցնում բոլոր հողարկավորները: Գերեզմանից հանված ողջ հողը լցվում է վրան և թումբ

արվում, որի վրա տիրացուն փոքրիկ փոս է անում և բուրվուռի կրակը լցնում մեջը: Քահանան խաչով կնքում է հողաթումբը: Թարմ հողաթմբի վրա սառը ջուր էին լցնում³⁹: Գանձակում և Խոյուն թաղումից հետո գերեզմանին իսրույկ էին վառում: Հանգուցյալի հոգին՝ համարվելով կենդանի, ամենից առաջ կարիք ունի ջրի, հացի լույսի ու ջերմության:

Մահնեղականների գերեզմանները փորում են հարավոց հյուսիս, դեմքն ընկնում է դեպի հարավ՝ Մեքքա, իսկ քրիստոնյաները՝ արևելքից արևմուտք:

Սասունում թաղումը կատարում էին հրացանների համազարկերի ուղեկցությամբ (այդպես է այժմ Աբցախում) հաստատելով, որ միշտ պայքարի, պաշտպանվելու և վոեժխնդրության պատրաստ են, անգամ վշտի պահին:

Հին արմատներ ունի դամբարանական խոսք ասելու սովորությունը: Դեռևս Մատթեոս Ուռհայեցին գրում էր, որ Բարսեղ Վարդապետը Քրիստոսի հաղթող գինվոր Պաղտուհինի մահվան առթիվ երկարաշունչ մի դամբարանական գրեց⁴⁰: Առաջ, որպես կարգ, գերեզմանին խոսք էր ասում քահանան, իսկ այժմ հանդես է գալիս՝ քաղաքում մտերիմ կամ ծանոթ մի մարդ, գյուղում՝ հեղինակություն վայելող մեկը: Խոսողը նշում է հանգուցյալի արժանիքները, թերի մնացած գործերը, անդրադառնում մահվան հանգամանքներին, սփոփում հիշատակի երկարակեցությամբ: Երբեմն կարդացվում է չափածո հուզիչ խոսք: Ծիշտ այնպես, ինչպես. «Դավթակ անունով ճարտասանի մեկը, որ ծանոթ էր տաղաչափական արվեստին, ստեղծագործելու մեջ վարժ ու հաջողակ, քերթողական ընթերցման մեջ առաջադեմ, մեջտեղ եկավ: Սա առատ խոսքերի պաճուճանքներով ճարտար կերպով եբզում է և շատ գովաբանում, ունենալով այն-

³⁶ Կինն. է շարժել Աստծո գայրույթը և առաջ բերել մահը, նա խառնակիչ է ու բամբաստող: Սա կապված է նաև դիապոթությունից ու դիակասությունից խուսափելու հետ: Քահանային էլ են խոր թաղում՝ զգուշանալով նրա ճկույթը կտրելու շատ հավատացյալների գայթակղությունից -Ե. Դ.:
³⁷ Անձնական գրառումներ, Արցախ, գ. Աշան, 1997թ., հունվար:

³⁸ Կարապետյան Ե., նշվ. աշխ., էջ 12:

³⁹ Այս սովորության արձագանքները տես՝ Երուխանի «Անեղներու ջրկիրը» և «Հուսահատի մը նկարագիրը» նովելները, Գովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի «Նրա անրախտ շիրիմի վրա...» հատվածը:

⁴⁰ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 252:

պիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը»⁴¹:

Քաղաքներում առաջ գերեզմանատուն էին զնում ծաղկեպսակներով զարդարված դիակառքերով, իսկ այժմ՝ ավտոմեքենաներով, Թաղումից հետո առանց ցրվելու, մանավանդ առանց այցելելու ուրիշ գերեզմաններ, հուղարկավորողները վերադառնում են սգատուն: Նախքան տուն մտնելը բոլորը անխտիր լվացվում են՝ դրսում թողնելով արցունքի ու վշտի հետքերը:

ե) Հագարամյա վաղեմություն ունի հոգեհացը: Հնագույն դամբարանների կողքին պեղվում են քարե հարթակներ՝ գոհարերությունների ու հոգեհացի համար բնորոշ առարկաներով, Համեմատարար նոր ժամանակներում է հոգեհացը գերեզմանատնից տեղափոխվել մեռելատուն: «Հոգեհացի ծիսակատարությունը շատ տարածված է եղել հյուսիս-մերձսևծովյան շրջաններում, Բոսֆորյան թագավորությունում մ.թ.ա. V - I դարերում, հատկապես հելլենիստական շրջանում»⁴²:

Թաղումից հետո բոլոր եուղարկավորները հրավիրվում են ճաշի («Ծնկնահաց», «Պատարագ», «Ժընահաց», «Հոգեհաց», «քելեխ»): Պատարաստվում է մսով ճաշ (եթե պաս է՝ լոբի, շիլա), աշխատում են իուսափել ուղախություն հիշեցնող ուտելիքներից ու իմիջքից, իսկում էին ավանդական գինին և օղին: Նախ քահանան օրհնում էր սեղանը, և բոլոր ներկաները վառված մոմը կամ խնձորը և նույն գավաթը ձեռքից ձեռք փոխանցելով «ողորմաթաս» էին իսկում: Այժմ խնում են յուրաքանչյուրն իր գավաթով, բայց ղըանք իրար չեն իսկում, այլ ընդհանրապես են մոտավորապես աչքերի բարձրությամբ: Կենացները լինում են գուսպ, կարճ, փիլիսոփայական, մխիթարիչ³:

⁴¹ Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 175:

⁴² Խաչատրյան ժ., նշվ. աշխ., էջ 48:

³ Բերենք հոգեհացի մի կենաց. «Աստված օղորմա Քրիստոս հավատացյալ բոլոր մեքենայների հոգուն: Աստված օղորմո հայր Աբրահամին, Գրիգոր Լուսավորչին, երեք հարյուր տասնութ վարդապետաց, Մելիքսեթ քահանային եւ թող նրանց բարի ու անարատ օրհնությունը լինի ժողովրդաց վերա»:

Ուտելուց հետո բոլորը «Ողորմիսներ» սփռելով ու ընթացողություններ անելով ցրվում են: Մերձավոր ընթացողություններ մինչև յոթ օր, ավելի ծանր դեպքերում անգամ մինչև քառասունը մնում են մխիթարելու տնեցիներին:

Նոր Նախիջևանում թաղումից անմիջապես հետո, գերեզմանի մոտ, բոլոր հուղարկավորողներին բաժանվում էր բրդուճ կամ խմորեղեն և մի-մի բաժակ օղի: Իսկ մեռելի տանը ընդունված հոգեհացից հետո, յուրաքանչյուրին տրվում էր մեկական գաթա՝ տուն տանելու համար⁴³: Այս սովորությունը կար նաև Գողթնում:

Թաղման օրը լվանում էին հանգուցյալի շորերը և բաժանում բարեկամներին ու աղքատներին, քահանայի ընթացող կողմում էր «կողոպուտ»: Հանգուցյալի անկողինը առանց հարդարելու ծալում էին և նրա մեջասենյակում ճրագը յոթ օր վառ պահում, մինչև հոգին հասնի իր վերջնական կայանը՝ երկինք («վերին երուսաղեմ»): Ողբն ու կոծը շարունակվում է հանգուցյալի շորերի, իրերի ու լուսանկարի վրա, նրա մասին պատմվող հիշողությունների շուրջ:

Հաջորդ օրը վաղ լուսարացին մեքենայի տարեց հարագատներից մեկը, առանց պատահողին ընթացող և որևէ մեկի հետ իրար փոխանակելու, զնում է գերեզմանատուն, համբուրում գերեզմանը և երեք անգամ «վսյ» կանչում (սա ցավ արտահայտող անեմալնոլունված ձայնարկությունն է, որով, ի դեպ, սկսվում են սգո երգերի կրկնակները), որպեսզի գերեզմանի շուրջը սավառնող հոգին, համոզված լինելով, որ իրեն չեն մոռացել և վշտանում են բաժանվելու համար ու տեր կկանգնեն գերեզմանին, հանգիստ թոչի, հեռանա:

Աստված օղորմա կամուրջ կառուցողանց, աղբյուր ու ակն շինողանց, մարդկանց ծոված հակեն տեմ կնոզանց, եթիմ պրիողանց...

Աստված օղորմի կյեշանի հոգուն և թող համբերություն մաղթենք բարեկանաց: Ժողովուրթ, հաց կերեք, կյեշանը հաց օտող մարթ ա ըլլալ (Հարությունյան Լ., նշվ. աշխ., էջ 308) - Ե. 7.:

⁴³ Շահազիզ Ե., Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, ԱՂ, գ. 7 - 8, էջ 99:

Արևածագից առաջ, այնպես, որ արևին դիմավորեն թարմ հողաթմրի մոտ, գերեզմանոց են գնում ընդհանուր կանայք «եզմահողը» կամ «այգը» կատարելու: Տանում են ուտելիք, որը երկար լալուց, մեռելի հետ զրուցելուց, իրենց վիշտն ու ցավը պատմելուց հետո ճաշակում են գերեզմանի մոտ, գերեզմանի վրա լցրած ջրից ու գերեզմանահողից քսում կրծքներին («դարդից հովանում») և հանգուցյալի ռաժինը թողնելով վերադառնում մեռելատուն՝ ճաշի: («Յացը թեթևություն է»): Այդ օրը ազգականները և ընտանիքները «սգապատառ» են բերում հանգուցյալի տուն: Մինչև «լոթը» հարևաններն ու ընտանիքները անընդմեջ այցելություններ են անում սգվորներին, զրուցում, ցրում նրանց վեշտը: Ազգվորները հրաժարվում են ընդհանուր տեսակի աշխատանքներից (առաջ տնից դուրս էին գալիս միայն եկեղեցի գնալու համար):

Մինչև վերջերս «յոթին» նախադրող երեկոյան ընտանիքները «սգահան» էին ուղարկում մեռելատուն, որը պարունակում էի խմիչք, քաղցրեղեն և ամենատարեց սգվորի համար մի նվեր: Հավաքվում էին ազգականները՝ իրենց հետ օճառ բերելով, ավսգության կարգով լուղացնում սգվորներին կամ նրանց տանում ընդհանր («սգարադնիք»), փոխում սև հագուստներն ու սև գլխաշորերը: Տղամարդիկ էլ տղամարդկանց էին «սգահան» անում՝ տանելով ընդհանր և վարսավիրանոց: Այս արարողությունը երբեմն ուղեկցվում էի ճաշկերույթով և զուռնադիլի նվագով՝ նախ ախուր, վերջում՝ ուրախ⁴⁴: Երիտասարդ հանգուցյալի դեպքում հարագատները սուգ էին պահում ավելի երկար: Յոթերորդ օրը նորից մեծ խմրով այցելում էին գերեզմանոց, քահանան կատարում էի «լոթներից կարգը», կանայք սուգ էին ասում, արցունք թափում և վերադառնալով տուն ճաշակում ընտանիք:

⁴⁴ *Սեդրոսյան Կ.*, Արևեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեռնականցիների կենցաղում, ՀԱԲ, Ե.6, Երևան, 1981, էջ 52:

Քրիստոնեական ու ժողովրդական ընդհանուր տոներին ժողովուրդը մեծ ուշադրություն ու հոգատարություն է հատկացնում սգվորներին: Յուրաքանչյուր մեծ տոնի հաջորդում է մեռելոց, քանզի համոզված էին, որ հանգուցյալի հիշատակը հարգելով և նրա պատվին զոհարարություններ անելով, փրկում են նրա հոգին դժոխքից, տեղը հաստատում երկնքում:

Դեռևս վաղ միջնադարում Աղվանքի Վաչագան արքան մի ընտանիքի ժողով գումարեց Աղվանում, որտեղ ընդունված որոշման կետերից մեկն էի. «Աշխարհականներից ոչ ոք՝ ազնվական, շինական կամ մեկ ուրիշը, տարվա ընթացքում պատարագը չպետք է թողնի՝ այսինքն մեռելների հիշատակը պետք է կատարի, ինչպես որ կարող է. իրենց վաստակից մեռելներին անմաս չպետք է թողնեն, մեռած մարդու համար մի ձի, եթե ձի կա, մի խոշոր եղջերավոր անասուն՝ արջառ, եթե կա, մեռելի տերը եկեղեցում պիտի տա, դրանցից որ մեկը կամենա»⁴⁵:

Ըստ ծեսի նշվում են մաս մահվան քառասունքն ու տարին: Նույն կերպ գնում են գերեզմանները, լալիս ու կոծում, հոգեհաց մատուցում: Այսպես աստիճանաբար մեղմանում է ողբերգության ուժգնությունը: Տարվա ընթացքում ընտանիքները նշանդրեք, հարսանիք, կամ այլ ուրախություն անելուց առաջ «սգահանիք» վերցրած գալիս և առնում են ավագ սգվորի թույլտվությունը: Սովորաբար մի ամբողջ տարի ամեն շարաթ առավոտյան հարագատները այցելում են ջահել հանգուցյալի շիրիմին: Եվ ընդհանրապես իրենց կյանքի արտասովոր տխուր և տոնական պահերին, որոշ վայրերում նույնիսկ ամեն օրվա լուսարացին⁴⁶, կանայք սովորություն ունեն գերեզմաններ այցելելու, լացելու, թեթևանալու վշտերի բեռից: Այս պարագայում ասվող սգո երգերը ունեն ընդհանրակային առանձնահատուկ շեշտեր՝ ուղղված հանգուցյալի անմոռանալի լինելուն,

⁴⁵ *Մովսես Կաղանկատվացի*, նշվ. աշխ., էջ 175:

⁴⁶ Ատոնադարան ժողովրդեան, նշվ. հատ., էջ 21:

կյանքում նրա ռացակայության դժվար տանելիությանը.

Գիտես թը մոոցե՞ր իմ քեզ,

Չիմ մոոցեր, դուն մոոնալու չես:

Մտեր էիր մեջ սրտիս,

*Աչերուս ալ ելլալու չես*⁴⁷:

«Շատ անգամ կը պատահի, որ մեռելին թաղումեն վերջ սրտերը դեռ չը հովահրի, ու վիշտը երթալով «խորուրնայ». հոս սուգը կ'ելլէ իր եփ ելած վիճակէն, ու իմաստնախոհութեան համագամաքը կ'առնէ: Մեռած սիրելին անուշ յիշատակներով կը խօսի ու ընկճուած վշտահար հոգիները կը թանաստեղծեն միսախք խորհողութեամբ», - գրում է Մ. Վարդը⁴⁸:

Ծեր կանայք սովորություն ունեն մենակության պահերին քփ տակ, համարյա անլսելի սուգ ասել, հիշել իրենց հին ու նոր, քահել ու ահել մեռելներին: Մի թան, որ ապացուցում է, որ սուգը ժխական պարտադրփստություն լինելուց զատ մաս հոգու պահանջ է: Բայց աշխատում են սթափ լինել սգվորները, որ չտառվին լացով. «Լացը լաց ա պուրում», վշտի հոսանքը չտանի իրենց ու կյանքը մնա չապրված:

Ուշագրավ տեղիկություն կա Յ. Քօսեանի «Պատմութիւն Հալեայի հայոց» գրքում. «Երրոր երիտասարդ ամուլի մը մեկը կամ ընտանիքի ժառանգորդը մեռնի, երբեմն քանի մը տունե թաղկացած մահերգ մը կը հորինվի և մեռնողին տիրոջ դուան առջեւ կ'երգվի ծեր մուրացկաններու կողմէ՝ սիսուր եղանակով մը»⁴⁹:

Որոշ սգո երգեր անմիջական թառային արտահայտություններն են թաղման հետ կապված սովորությունների ու հավատալիքների.

Էն խեղճուկ Մայրամին պատանք ծեւեցեք,

Էս օր մեռնիմ, ժամուն պաղջան թաղեցեք,

Վըրայիս հողկիկը մաղով մաղեցեք,

Բոլորըս կայնեցեք մոմեր վառեցեք,

Աղջընկա ու տըղիս խապար ծամբեցեք:

Սուրբ Սերգիս օգնական, ճերմակ ծիավոր,

Չոգեւոր մարմնավոր ես եմ մեղավոր:

Մեր սուրբ ավետարան այրը (միշտ) կըկանչե

Դու քու հոգիդ հոգա, մարմինդ հեչ է,

Գաբրիել հրեշտակն, օր դատաստան կանչե,

*Էրանի արդարոց, վայ մեղավորաց*⁵⁰:

Եթե ննջեցյալը շարունակ հետևում է մտերիմներին երագում, որոշ վայոհրում գնում են գերեզմանատուն և փայտե ցից կամ շամփուր խրում նրա սրտի ուղղությամբ, ստուգելու համար՝ եանգուցյալը կենդանի է թե ոչ, գերեզմանին գարի են ցանում և մոտեցնում ծիւն, եթե սա եանգիստ ուտում է, ուրեմն հանգուցյալից վախենալու հարկ չկա, իսկ եթե խրտնում ու չի ուտում, հանում են դիակը, մեխ խրում գլխի մեջ, պատոում սիրտը և նորից թաղում⁵¹:

Թաղման ժեսը իր ամրողջության մեջ խորհրդանշում է մարդու անցումը մի աշխարհից մյուսին և թաղմանը մնում է մեկը. որ այդ տափոխությունը լինի թանական ու թնական: Ժողովուրդը ամեն ինչի թնականությունն է ընդունում և խոնարհվում է տրամաբանականի առջև: Իսկ տրամաբանանը այս պարագայում այս աշխարհից հոգնած ծերի մեկնումն է, ոչ թե սպասելիքներով լի երիտասարդի: Ռիզվեդայի հուղարկավորության հիմնում գրված է.

Как дни возникают один за другим,

*Как времена года идут за временами года
правильной чередой,*

*Так, о Создатель соразмеряй сроки их
жизни,*

*Чтобы юный не покидал древнего*⁵².

⁴⁷ *Ճանիկեան Յ.*, նշվ. աշխ., երգ 22:

⁴⁸ *Վարդ Մ.*, երգը իրրեւ երգեկան սլետք, «Բիւրակն», Կ.Պոլիս, 1899, էջ 804:

⁴⁹ *Քօսեան Յ.*, նշվ. աշխ., էջ 441:

⁵⁰ *Թումանյան Մ.*, նշվ. աշխ., հ.2, Երևան, 1972, էջ 368:

⁵¹ *Լիսիցյան Վ.*, Լեռնային Ղարարադի հայերը, ՀԱԲ, հ.12, Երևան, 1981, էջ 52:

⁵² Исследования в области балто-славянской духовной культуры, Погребальный обряд, Москва, 1990, с.37.